

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

19206

Ա.


Հ. Ս. Խ. Հ.

Կովկասի բալոր յեկեների, միացե՛ք

Դ. Կ Ի Ն

ԽՈՐՅՈՒԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ
===== ՅԻ =====
ՆՐԱ ԿԱՌԱՋԻՑՎԱԾՔԸ

ՓՈԽԱԳՐԵՑ Լ. Պ. Ա. Բ. Մ. Դ. Ա. Բ. Դ. Ա. Բ. Ա. Բ.



№ 9.

Կովկասի Ա. Բանակի Թագավորական Հեղ. Խորհրդին կից
Հայկական Խմբագր. -Հայտարարկական Կոլեգիա

ԵՐԵՎԱՆ - 1925

ՀԱՅԿ. ԽՄԲԱԳՐ. - ՀՐԱՏ. ԿՈԼԵԳԻԱՅԻ ՀՐԱՏԱ-
ՐԱԿՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Գիրը

1. Եճվալգ — Հրացանա-Հրածդային գործ,
փոխ. Գ. Կուրանյան 35 կ.
 2. Լ. Տրոցկի — Կարմիր հուշատեար թարգ. Գ.Տ.Ա. 20 կ.
 3. Գորլովսկի — Բանվոր դասակարգի Ա ֆ.հ.կ.
գրուի աակ, թարգ. Լ. Դանիելյան 40 կ.
 4. Կոզլովսկի — Քողարկում, I մաս թարգ.
Հ. Ալեքյան 20 կ.
 5. Կոզլովսկի — Քողարկում II և III մ. թարգ.
Հ. Ալեքյան 50 կ.
 6. Մ. Շահեն — Կարմիր Բանակ թարգմ.
Մ. Տ.-Հռվիաննիսյան 15 կ.
 7. Հուշատեար հրացանաձիգ կուրմիր բանա-
կայինի 1891 թվականի տիպարի Յ գծանի
հրացանը խնամելու համար. թարգ.
Մ. Տ. Հռվիաննիսյան 20 կ.
 8. Բ. Գ. Բ. Հետեակի ժամանակավոր մար-
տական կանոնագիրը մասն I թարգ.
Ար. Ռէանյան 25 կ.
 9. Դ. Կի6 — Խորհրդային իշխանությունն ու նրա
կառուցվածքը փոխադրեց Լ. Վարդունի 40 կ.
- ՑՊԱԳՐՎՈՒՄ Են**
1. Հետեակի մարտական ծառայությունը
 2. Ն. Մոռօզվ — Հետեակի ուզմավագրությունը
 3. «Կոլտ» զնդացրի նկարագրությունը
 4. Օ. Միխեյեվ յեվ Գ. Սվենցեցկի — Ռազմա-
կան տեղագրություն

300
2681-ԿԱ

328(47)
4-49

27 SEP 2006

Ա. Խ. Հ. Ա.

Հ. Ս. Կ. Հ. Ա. Հ.

Պատեատիներ բոլոր յերկրների, միացել.

Դ. Կ Ի Ն Հայկական հայ -
հայու չուչնա ձայրին
19/Հ1 - 25 ր.

ԽՈՐՀՈՎԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ

ՈՒ

Գրքիս 55-րդ յերեսում սպլրդել և հետեյալ կա-
րեոր սխալը — ներքեցից 2-րդ պարբերության տեղ
պետք և կարդալ հետեյալ յերկու պարբերությունը.

Պոստ-հեռագրային ծովովրգական կոմիսարիա-
նը զեկավարում և յերկրի բոլոր կապակցության մի-
ջացները — պոստն ու հեռազերը:

Արտաքին առեվտրի ծովովրգական կոմիսարիա-
նը վարում և առեարական հարաբերություններ ո-
տար պետությունների հետ:

20 MAY 2013

005 19206
100-1889

69496-68

Տպագրական տրեստի 2-րդ տպարան Յիշեվան,
№ 1283 Տիրամ 2000

1. ՄԵՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԸ

Այն պետությունը, վորածեղ մենք ապրում
ենք, կոչվում է Սոցիալիստական Խորհրդային
Հանրապետությունների Միություն:

Մինչև 1917 թվի փետրվարը մեր յերկիրը
կոչվում եր Ռուսական Կայսրություն և կառա-
վարում եր թագավորը:

Ա. Խ. Հ. Մ. բոնում եր յերկրագնդի ամ-
բողջ ցամաքի $\frac{1}{7}$ մասը. նրա տարածությունը
կազմում է 20,4 միլիոն քառակուսի վերաս:

Ա. Խ. Հ. Մ. սահմաներն ե Սև ծովի ա-
փերը, Ռումինիան, Լեհաստանը, Լիտվան, Լատ-
վիան, Եստոնիան, Ֆինլանդիան, Շվեյցարիան,
Ապիատկ ծովի, Հյուսիսային Սառուցյալ ովկիա-
նոսի և Ախուային ծովի ափերը, Յապոնիայի,
Չինաստանի, Աֆղանիստանի, Պարսկաստանի և
Տաճկաստանի սահմանակցությամբ:

Ցարը բանությամբ և ուժով յուր ուժեղ
ձեռքի տակն եր առել բացմաթիվ աղքեր, վո-

բոնց քրտինքով հարսաանում ելին կալվածատերերն ու կապիտալիստները:

Պատերազմների շնորհիվ մեղնից անջատվեց 2, 6 միլիոն քառ. վերստ. Յերկրի վորոշ մասը գավթեցին Ռումինիան (Բեսարաբիա) և Յազոնիան (Սախալինի հյուսիսային կեսը), մի մասն ել անցավ Լեհաստանին համաձայն Ռիգայի խաղարար գաշնազրի: Բացի դրանից՝ վորակս ինքնուրույն պետություններ անջատվեցին Լեհաստանը, Ֆինլանդիան, Լիտվան, Լատվիան և Եստոնիան, վորոնք նախքան հեղափոխությունը մտնում ելին Ռուսական կայսրության մեջ:

1920 թ. Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության ազգաբնակչությունը 137 միլիոն շնչի յեր համառում, իսկ 1914—17 թ. պատերազմների ընթացքում 178 միլ. շնչի: Այդ 137 միլիոնից ռուսաստանի քաղաքներում ապրում են 20 միլիոն, իսկ ազգաբնակչության մնացած մասը՝ գյուղերում. մինչև պատերազմը քաղաքներում ապրում եր 28 միլ. իսկ գյուղերում 150 միլիոն. 1914 թվի և ներկայիս ազգաբնակչության թվի այդ տարբերությունը բացատրվում է նրանով, վոր մեր յերկրից բաժանված յերկրատասերն ունելին շատ աղքաքնակչություն:

Մեր յերկրում ապրում են շատ ժողովուրդներ և ցեղեր. նրանցից զլատովորներն են գելի-

կորոսները, ուկրայնացիները, բելոռուսները, հրեաները, լեհերը, թաթարները, չովաշները, կիրպիցները, բաշկիրները, սարթերը, վրացիները, հայերը, թուրքերը, ոսկըրը, յակուաները, և այլն: Այդ բոլոր ժողովուրդներն համարվում ելին թագավորի հավատակներ: Ռուսաստանում իշխում եր զլատափորապես վելիկոռուսական բուրժուազիան, վորագուազիան, վորը ճնշում եր ինչպես յուր, այնպես ել բոլոր ժողովուրդների աշխատավոր մասսաներին, և իյուր չեր Ռուսաստանը կոչվում «ազգերի բանե»:

1917 թ. վետրվարին ատպալվեց կայսերական իշխանությունը, իսկ հոկտեմբերին գեն շալտավեց բուրժուական ժամանակավոր կառավարության տիրապետությունը. այսպիսով նախկին ռուսական կայսրության յերկրամասում իշխանությունն անցավ բանվորների և գյուղացիների պատգամավորների խորհուրդներին, և կազմվեց Ռուսաստանի Խորհրդային Հանրապետությունը:

Ռուսաստանի Խորհրդային Հանրապետությունը, վորակս մեծ բանվորական պետություն աղատ միության մեջ համախմբելով ամրող աղղաբնակչությանը և նախկին միապետական Ռուսաստանի բոլոր ցեղերին՝ հավասարվեց աշխարհի մնացած պետություններին, ուր մինչև այսոր թագավորում ե գեռ բուրժուական իշխանությունը:

Խորհրդային հանրապետության ստեղծման
առաջին օրից սկսած, նրան ասող ոռւսական և
համաշխարհային բուրժուազիան նպատակ դրեց
մասնիկների ծվատել և միանգամայն վերացնել
Խորհրդային իշխանությունը:

Աշխատավորության թշնամիներին աջողվեց
քաղաքացիական կոիվսերի ընթացքում զավթել
Խորհրդային իշխանության մի շարք շրջաններ։
Յեթե ընդհանուր գումարի բերենք այն, թե վոր
փայրերում չեր աջողվել բուրժուազիային և
սպիտակ զվարդիականներին քաղաքացիական
կոիվսերի ընթացքում ժամանակագորապես հաս-
տառել իրենց իշխանությունը, կը մնա միայն Վե-
լիկոոռուսիան, այն ել վոչ ամբողջովին, վորով-
հետև Դենիկինը 1919 թ. հոկտեմբերին զրավեց
Որյոլը և մոտեցավ Տուլային, իսկ Յուդենչչը
մոտավորապես նույն ժամանակ կանգնած եր
Լենինգրադի տակ։ Բայց Կարմիր բանակը հա-
մառ կոիվսերում իրար յետելից Սպիտակներից
ազատեց Ռուսաստանի զրավված շրջանները։
1920 թվին Կարմիր զորքերն ազատեցին Հյու-
ստային յերկրամասը։ 1920 թվի հունվարից
մարտ Կոլչակից ազատվեց Մերձվոլգյան շրջանը,
Ռուրալը, Մերձուրալյան տափաստանները, Սիբիրը
մինչև Իրկուտսկ։ հոկտեմբերին Կարմիր զորքերն
անցան Բայկալի յետել և զրավեցին Չիտա քա-
ղաքը։ 1920 թ. Սպիտակ զորքերից մաքրվեց

Ուկրայնայի մեծագույն մասը, ամբողջ հարավն
ու Սև ծովի ափերը, 1920 թ. մարտին ազա-
տազրվեցին Դալստանը և Հյուստային Կովկասը,
իսկ ապրիլին զրավվեց Բագու քաղաքը։ 1920
թ. սեպտեմբերին մաքրվեց Թուրքիստանը։ 1920
թ. ապրիլին դադարեց Լեհաստանի հետ ունե-
ցած պատերազմը, նոյեմբերին վերջնականապես
ազատվեց Ղրիմը։ 1920 թվի նոյեմբերին ազատ-
վեց Հայաստանը։ 1921 թ. ազատվեց Վրաստա-
նը։ 1922 թ. ազատվեց սպիտակներից զրավված
Հեռավոր Արևելքի հանրապետության մի մասը.
և այդպիսով Խորհրդային իշխանության 5-րդ
տարեղարձին մեր հանրապետությունը հաստատ-
վեց Բալտիկ ծովից մինչև Մեծ ովկիանոսը և
Սպիտակ ծովի ափերից սկսած մինչև Սև ծովը։
Սյազիսով համեմատաբար նախկին Ռուսաստանի
հողերի քիչ մասն ե անջատվել Խորհրդային Հան-
րապետությունների Միությունից։

Ռուսաստանում ապրող բոլոր ազգություն-
ների և ցեղերի աշխատավորներն ցարի «ազգե-
րի բանտից» ազատված, համախմբվեցին Ս.Խ.Հ.
Միության շուրջը ազատ հանրապետություննե-
րի միության հիմունքներով։

2. ԲԱՆՎՈՐԱԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒ- ԹՅՈՒՆՆ ՌՈՒՍԱՏԱՆՈՒՄ

Յերկար դարերի ընթացքում մեր յերկիրը գտնվում եր ցարական միապետության իշխանության տակ, թագավորն համարվում եր «Համառուսական ինքնակալ», «յերկրային աստված», սակայն իրականության մեջ նա միայն իշխանների, կալվածատերերի, վաճառականների և արդյունաբերողների կամտկատարն եր: Որինակ, յերբ Պավել թագավորը չկատարեց իշխանների ցանկությունները և հակառակեց նրանց շահերին, հեռացվեց և իշխանները գահ բարձրացրին Ալքսանդր 1-ին:

Ցարական իշխանությունն այն ուժն եր, վորի շուրջն եյին հավաքվել ունեոր գասակարգերը: Ցարական իշխանությունը խիստ մեծ հսկողությամբ պահպանում եր կալվածատերերի և կապիտալիստների շահերն ու սեփականությունները, նա զյուղացիներին ամրացնում եր կալվածատիրական հողերին՝ ստիպելով նրանց աշխատելու կալվածատերերի համար, և յերբ հող ու ազատություն ձեռք բերելու համար զյուղացիները ապստամբում եյին կալվածատերերի դեմ, այն ժամանակ յերկաթի ուժով և արյունով խաղաղեցվում եր զյուղացիական այդ ապստամբությունները: Նա կախում, բանա

նստեցնում ու աքսորում բանվորներին, յերբ նրանք ապստամբում եյին ու պահանջում գործարանատերերից իրենց չնշին աշխատավարձի կողեկիների հավելումը:

Ունեորների շահերի պաշտպանության համար ցարական իշխանության արամագրության տակ կային բանակ, գոստիկանություն, ժանդարմաններ, գատարաններ, չինովիկներ, վիճակային և զավառամասային նոկիչներ, տանուտերեր, աքսորներ, բանատեր և այլն...

Այդ ամբողջ մեքենան ծանր կերպով ճընշում եր աշխատավորությանը, նրա աջակցությամբ բուրժուազիան քամում եր աշխատավոր ժողովրդի հյութը: Պետական իշխանության ոգնությամբ բուրժուազիան ճնշում և շահագործում եր ամբողջ աշխարհի աշխատավորության: պետության անունից ունեոր գասակարգերը իրենց կարգերն ու որենքներն եյին թերապրում համայն աշխարհի աշխատավորությանը՝ խստիվ պատճերով բոլոր խանդարիչներին:

Պետական իշխանությունը, բուրժուազիայի վարչության ամբողջ ապարատը կազմված եր կալվածատերերից, իշխաններից, գործարանատերերից և վաճառականներից: Դարերով ունեվոր գասերը ընտրում և գաստիւրակում են իրենց չինովիկներին, վարիչներին, գործակատարներին, գարձնելով նրանց արհեստական կու-

մակատարներ և հակիչներ աշխատավոր ժողովը գույքը գույքների վրա։ Պետական իշխանությունը ափրող դասակարգի ձեռքի ճնշման և բռնության զենքներ ընկճած և յենթարկվող դասակարգերի վրա։ Շնորհիվ Ռուսաստանի կալվածատերերի և առետրա-արդյունաբերական դասակարգի ստեղծման ամուր պետական ապարատի, նրանք շարունակեցին դիմանալ դեռ յերկար, չնայած, վոր նրանց տիրապետության արմատները փառում եյին։

Հենվելով պետական ապարատի վրա, ամբողջ աշխարհի բուրժուազիան դեռ մինչև որս դիմանում են չնայած, վոր նա համաշխարհային պատերազմով և յուր ավերիչ քաղաքականությամբ ամբողջ աշխարհը հասցրել և ծանր արնատեսական դրության։ Պետական իշխանությունը վիթխարի ուժ է։ Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիները յերկար տարիներ ձգտել են ունենորների լծից ազատվելու։ 1905 թվի հեղափոխության ժամանակ գյուղացիներն սկսեցին կտրվածատերերից հողերը խլել, բանվորներն սկսեցին անցկացնել նոր կարգեր, ստեղծել իրենց միությունները, բայց վորովնետե չեր արված ամենապլխավորը, չեր կործանված միտպետությունը, անվասա եյին բանակն ու վոստիկանությունը, հեղափոխությունը հաղթվեց և խեղդվեց ժողովը արյան մեջ։ 1917 թվին աշխա-

տավորությունն այլկերպ վարվեց. Նա զեն շպրտեց թագավորին, արձակեց հին բանակը, հեռացրեց բուրժուական նախարարներին, բյուրոկրատիային և ստեղծեց յուր խորհուրդները, յուր պետական իշխանությունը։

Բանվորագյուղացիական կառավարությունը կազմվեց ընտրված բանվորներից, գյուղացիներից և աշխատավորների առաջնորդ կոմունիստներից. Նա կազմակերպեց նոր, կարմիր բանակ, ուր հրամանատարական պաշտոններում հետզհետե կանգնեցին բանվորները, գյուղացիները և նրանց նվիրված մարդիկ. հիմնեց հեղափոխական գաղաքան և այն։ Յեղ շնորհիվ նրան, վոր իշխանությունը իրենց ձեռքն եյին վերցրել բանվորագյուղացիական խորհուրդները՝ գյուղացիներին հաջողվեց խլել հողերը, բանվորներին՝ ստեղծել իրենց վարչությունները գործարաններում։ Խորհրդային իշխանության դեկավարությամբ բանվորներն ու գյուղացիները վոչ միայն գրավեցին մեր յերկրի կարկորագույն հարստությունները, այլև կարողացան ազատվել Սպիտակ բանակների և ստար կապիտալիստների հարձակումներից։ 1920 թ. հատլիայի ապստամբ բանվորներն ու չքավոր գյուղացիությունը—իրենց ձեռքը ձգեցին մի շարք գործարաններ և հողամասեր, սակայն նրանք շարին ամենազլխավորը, նրանք չկործանեցին թագավորի, բուրժուազիայի

և կարվածատերերի իշխանությունը և ջարդվեցին այնպես, ինչպես մեր բանվորներն ու գյուղացիները 1905 թվին:

Ամբողջ ուժն ու կարսությունը պատկանում է նրանց, ովքեր ունեն խոշոր գործարաններ, հանքահորեր, դրամաներ, հողեր, յերկաթուղիներ, բոլոր ճանապարհներն ու հաղորդակցության միջոցները, բայց այդ հարստությունները պահելու համար, բուրժուազիայի հետ պարփառելու, յուր դասակարգի շաբքերում կարգ ու կանոն ստեղծելու, յերկիրը կառավարելու ու բանակ կազմակերպելու համար հաղթող բանվոր դասակարգը պիտի հաստատի յուր բանվորացյուղացիական Խորհրդացին իշխանությունը:

Մեր բոլոր գյուղերում և քաղաքներում, իշխանության, կառավարության, բանակի և դատարանների գլուխ անցած են բանվորների գյուղացիների ընտրյալները:

Մեր իշխանությունը ընտրովի յե, իսկ այնպիսի կարգը, ուր իշխանությունը կազմված է ընտրված մարդկանցից և վոչ թե իշխանությունը ժառանգաբար ստացող թաղավորներից կամ կայսրներից, կոչվում է հանրապետություն։ Պետք է մի բան միայն տարբերել, այն վոր Ֆրանսիայում, Գերմանիայում, Ամերիկայում (Միացյալ Նահանգներում) նույնպես չկան թագավորներ և կայսրներ, նրանք նույնպես

կոչվում են հանրապետություններ։ բայց բուրժուական հանրապետություններում վարչական մարմիններում ընտրվում են վոչ թե բանվորներն ու գյուղացիները, այլ կապիտալիստների գասակարգից, աշխատավորներին խարելու և շահագործելու ասպարիզում ավելի քան խորամանկներն ու փորձվածները։

Մեր իշխանությունը կոչվում է բանվորական գիկատառուրա—գերիշխանություն, այսինքն ամուր յերկաթե իշխանություն։ Խորհրդացին իշխանությունը վոչնչացնում է յուր թշնամիներին խիստ միջոցների զիմելով, կանգ չառնելով բուրժուազիայի գեմ արյունալի ահաբեկութիւնը գործադրելու առաջ։ Նա կարողանում է նույնպես յուր շաբքերում ամուր ձեռքերով պահպանել կարգ ու կանոն, առանց վորի հաղթելն անկարելի յե։

Պրոլետարիատի գիկատառուրայի գաղափարը բանվոր դասակարգին կտակել են նրա ուսուցիչներ—Կ. Մարքսն ու Ֆ. Ենգելսը։

«Մեր վերջնական նպատակ՝ զրել է ենգելսը—սոցիալիստական հեղափոխությունը կայանում է բանվոր դասակարգի կողմից քաղաքական (պետական) իշխանությունը գրավելու մեջ, վորպես միջոց հասարակության վերակառուցման։»

«Իմ ուսմունքը կայանում է նրա մեջ, վոր կապիտալիզմի զարգացումը առնում է դեպի

պրոլետարիատի գիլտատուրան» ասել եւ Մարքսը:

Այդ գաղափարը յերկար տարիներ քարողել է կոմունիստական կուսակցությունը: Բնկ. Լենինը շատ առաջ, նախքան Փետրվարյան հեղափոխությունը խոսել է հեղափոխության ընթացքում իշխանությունը բանվորակյուղացիական մասսաների կողմից գրավելու մասին: Յերբ սկսվեց 1917 թ. հեղափոխությունը, Կոմկուսակցության ղեկավարությամբ աշխատավոր մասսաները կառուցին իրենց իշխանությունը: Կոմ. կուսակցությունը յուր ծրագրի մեջ բանվորակյուղացիության իշխանության մասին այսպես ե ասում. «Բուրժուական հանրապետությունը... անխուսափելի յե, այն պատճառով, վոր գոյություն ունի հողի մասնավոր սեփականություն և սրաադրության զանազան միջոցներ, վորոնք հանդիսանում են բուրժուական ղերիշխանության մեքենան՝ ազգաբնակչության ձնշող մեծամասնությանը—աշխատավորությանը ձնշելու և շահագործելու համար հոգուտ կապիտալիստների, վորպես հակադրություն դրա, բանվորական կամ խորհրդային հանրապետությանը—կապիտալիզմից կեղեքված մասսայական կազմակերպությունները բանվորներին և գյուղացիներին, այսինքն՝ ազգաբնակչության ձնշող մեծամասնությանը դարձրին մշտական և միակ հիմքը պետական ապարատի կենտրոնում և աեղերում, վարից վեր:

Բանվորական պատգամավորների խորհուրդների ձեր, վորպես բանվոր դասակարգի կազմակերպություն, առաջ ե յեկել գեռ 1905 թվի հեղափոխության ժամանակ: 1905 թվին Լենինը գրադում և Մոսկվայում կազմված եյին բանվորական պատգամավորների խորհուրդներ: Այն ժամանակ բանվոր դասակարգը գեռ իրեն հաշիվ չեր տվել թե ինչ նշանակություն ունեն և պիտի ունենան խորհուրդները, վորպես պրոլետարիատի գիլտատուրայի որգաններ, վորպես սոցիալական հեղաշրջման և բանվորական հեղափոխության գենք:

Բնկ. Տրոցկին, Լենինը գրադի 1905 թ. պանդամավորների խորհրդի փոխնախագահը, խորհրդիների մասին գրում ե. «Խորհրդիների եյությունը կայանում ե նրա մեջ, վոր նա եր, կամ ձգտում եր դառնալ իշխանության կազմակերպություն. խորհուրդն իրականացըեց իշխանությունը, վորքան փաստորեն դա նրա ձեռքումն եր, նա անմիջականորեն պայքարում եր իշխանության համար, վորքան նա մնում եր ուղմագուստիկանական միապետության ձեռքում»:

Մոսկվայի Խորհուրդը նույն իսկ առաջադրեց զինված ապատամբություն կազմակերպելու խնդիրը, ապատամբությունը յեղավ միանգամայն անհաջող: 1905 թվի գեկանմբերի Յին Պիտերի Խորհուրդը ձերբակալված եր: Քայ-

քայլեցին բանվորական պատգամավորների խորհուրդները և մյուս քաղաքներում, ուր նրանք գոյություն ունելին:

Յեվ միայն Հոկտեմբերյան հեղափոխությունը ստեղծեց բանվորների և զյուղացիների խորհուրդների անսասան իշխանությունը:

3. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԵԴԵՐԱՏԻՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության զրոշի վրա կարմրին և տալիս բանվոր գասակարգի միջազգային նշանաբանը՝ «բանվորներ բոլոր յերկրների, միացեք»։ այդ զաղափարի համար և պայքարում Խորհրդային իշխանությունը՝ Խորհրդային իշխանության առաջին քայլերից մեկը Ռուսաստանի համառուսական «ազգերի բանալը» ազատ ազգերի ազատ միության վերածելն եր։ Բոլոր աշխատավորների շահերը միևնույնն են։ յեթե Ռուսաստանի բոլոր ժողովուրդների աշխատավորները փակված լինելին իրենց ազգային բներում և անջատված միմյանցից ուսարացման խուլ պատերով, այն ժամանակ բուրժուազիան մեր հանրապետության աշխատավորության հետ առանձին-առանձին գործ կը տեսներ։

Մեր հանրապետության մեջ յուրաքանչյուր

ազգության աշխատավորություն ազգական է ուր սեփական կամքով և ցանկությամբ իր կամքը անորինելու։ Սահմանադրությունը հայտարարում է. «Զգտել ստեղծելու Ռուսաստանի քողովածքը գերի աշխատավոր գասերի խօսկան պատկանակությունը միանույն ժամանակ լիակատանը և անքակտելի միություն։ Խորհրդային իշխանությունը յուրաքանչյուր ազգության բանվորներին և աշխատավոր զյուղացիությանն է թողնում իրենց սեփական խօրհուրդների լիազոր համագումարներում ինքնուրույն կերպով փորոշելու, թե արդյոք նրանք ցանկանում են մտնել Խորհրդային Հանրապետությունների Միության մեջ և ինչ հիմունքներով են կամենում մասնակցել համամիութենական իշխանությանը և Ս.Խ.Հ.Մ. պետական այլեայլ հիմնարկներում»։

Հանրապետությունների այդ միությունը կամ ֆեդերացիան կտուցված և այլ պետություններէ հետ տեղի ունեցող հարաբերությունների, անտեսական, սազմական և այլն ասպարեզներում ունենալիք գործունեյության մեջ կատար միացման հիմունքներով։ Բուրժուազիան փորձել և փորձում է քայլայել այդ միությունը։ Ռէկրայնայում 1918 թ. կուտակները, կարգածատերերը, ազգային բուրժուազիան, ինտելիգենցիան իրենց առաջնորդ Պետյուրի ղեկավարությամբ և Ավստրո-Գերմանական իմպե-

բիալիստական զորքերի ողնությամբ կազմեցին
այսպես կոչված «Ուկրայնայի ժողովրդական
Հանրապետությունը»։ Ուկրայնայի ժողովրդա-
կան Հանրապետությունը վեր և ածում յերկիրը
կանոնավոր կերպով հավատակող գերմանական և
ավստրո-վիեննովրիական բուրժուազիայի գաղութի։

Պետյորի իշխանությունն անցնում է Ռւկ-
րայնայի խոշորագույն կալվածատեր և ցարա-
կան նախկին սպա սպարապետ Սկորովադսկուն։

Աշխատավորությանը թանգ նստեց Փոքր
Ռուսիայի այդ «ինքնուրույնությունը»։ Վերջա-
պես նրանք ապստամբեցին և հիմնեցին խորհր-
դային իշխանություն։

Այդպիսի որինակները շատ են։ Առանձին
նահանգների կեղծ ինքնուրույնությունը մի
ծածկոց եր սպիտակ գվարդիականների զիկատ-
առուրայի համար՝ վերականգնելու ոտար կապի-
տալիստական կեղեքիչների ստրկացնող կախու-
մը՝ դարձնելով այդ նահանգները հականեղափո-
խական պայքարի հենակետեր Խորդդային իշ-
խանության դեմ։ Աշխատավորության շահերի
միացումն առանձնապես սուր կերպով և զգաց-
վում ժողովրդական տնտեսության ասպարիզում։
Կենարնական Ռուսաստանի գործարաններն ու
ֆաբրիկները չեյին կարող կառավարվել առանց
Դոնի քարածխանանքերի և Աղբբեջանի նավթի,
այնպես, ինչպես Դոնի քարածխանանքերն ու

Աղբբեջանը կարիք են զգում Ռ. Ս. Խ. Հ.
արդյունաբերական ձեռնարկություններին ու
ճանապարհներին քարածուխ և նավթ մատակա-
րարելու։

Խորհրդային իշխանությունն ունի ամբողջ
Միության սահմանները պաշտպանող միացյալ
համամիութենական կարմիր բանակ։ Խորհրդա-
յին իշխանությունն պիտի բոլոր կողմերով ամ-
բողված լինի թշնամիների հարձակումներից։
Ֆեղերացիայի մի վորհե մասում բանկվող զին-
ված հականեղափոխությունը վտանգ և սպա-
նում մեր ամբողջ բանվորական պետությանը։

Մեր հանրապետության զանազան մասերի
ազատազրմանը մասնակցել են բոլոր ազգերի
աշխատավորները և ներկայում բանակ կանչված
Ռւկրայնացի, Վելիկոռուս, Թաթար բանվոր-
ներն ու զյուղացիները, ծառայելով զրամանե-
րում և զնդերում, վորոնք ցրված են Վելիկո-
ռուսիայում, Միքիրում, Թոռում Ռւկրայնայում
և այլ տեղերում պաշտպանում են մեր ամբողջ
հանրապետության սահմանները։

Ոտար պետությունների հետ ունեցած բո-
լոր բանակցությունների ժամանակ՝ մեր Միու-
թյունը հանգես և զալիս վորպես ամբողջացած
մի միավոր ցուցադրելով ամբողջ Միության
հանրապետությունների կամքը։

Ծնորհիվ զրան Ս. Խ. Հ. Միջազգային

Յ. ԻՆՉՈՒ ՄԵՐ ՄԻՌԻԹՅՈՒՆԸ ԿՈՉՎՈՒՄ Ե ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ

Մեր հեղափոխությունն առաջ յեկավ շնորհիվ այն հանգամանքի, վոր բուրժուազիայի առաջ բերած ավերիչ և արյունալից միջազգային պատերազմների հետեանքով աշխատավոր մասայի աղքատացումն հասել եր ծայրահեղության: Ժողովրդական մասսաների աղքատացման հետ միաժամանակ կալվածատերերի, զործարանատերերի և վաճառականների հարստությունները պատերազմների ընթացքում աներեակայելի շափերով աճում եր: Ցարական իշխանությունը պատերազմների ժամանակ ժողովրդից հավաքել եր հսկայական հարկեր, հասարակության ամրող միջոցները վատնել եր թնդանոթների, զինամթերքի և բանակի հագուստավորման վրա, զործարանատերերին մեծաքանակ հարստություններ բերող հսկայական պատերեներ տալով: Բայց պատերազմը միայն վերջավորումն եր այն հակառակությունների և անդունդի, վորոնք միշտ գոյություն են ունեցել աշխատանքի և կապիտալի մեջ:

Նախքան հեղափոխությունը կալվածատերերին՝ պատկանում եր հողերի հսկայական տարածություն, բուրժուազիան բոլոր արդյունաբերական ձեռնարկությունների սեփականատերն

եր: Գյուղացիական մասսան միանգամայն զըրկված եր հողից կամ չնշին հողաբաժին ուներ. գյուղացիության տնտեսությունն անխնամ և թշվառ զրության մեջ եր. ձիերը չեյին բավկանացնում, արորը, գութանը, տափանը, վորոնցով գյուղացիությունը վարում եր, նախահայրերի ժամանակից եյին մնացել, Գյուղացիությունն ի վիճակի շեր բարեկավելու յուր տնտեսությունը, հողը մշակելու, մեքենաներ գնելու, վորովհետեւ ցարական իշխանությունը կորզել եր գյուղացիներից յուրաքանչյուր ավելացած կոպեկը, և հողն ել այնքան եր, վոր գյուղացիական ընտանիքը հազիվհազար կարողանում եր կիսաքաղց ազգեր յուր հողամասի վրա և բացի դրանից՝ կալվածատերերին պիտի վճարեր հողի կապալի մեծաքանակ դռւմար, այնպիս վոր գյուղացուն այլևս ավել կոպեկ չեր մնում:

Գյուղացիական չքափոր գասը զնում եր աշխատելու կալվածատերերի հողերի վրա սառնալով աշխատանքի փոխարեն զրոշներ:

Լավ չեր և բանվոր գասակարգի զրությունը զործարաններում: Աշխատանքը զործարաններում գաղցահի առաջ քայլքայում եր բոլոր ջերերը, իսկ աշխատավարձը չնշին եր: Ամեն ժամանակ զործարանատերը կարող եր բանվորին գուրս շպրաել փողոց, սովորակության մատնել նրան, զորովհետեւ յուրաքանչյուրի փոխարեն կարող են

գտնվել նոր անգործ աշխատավորների և քայլայ-
ված գյուղացիներ, վորոնք անցել են քաղաք
աշխատանքիւ:

Գյուղացիների ու բանվորների թշվառու-
թյուններն առաջ եյին գալիս այն պատճառով,
վոր հողերը, գործարանները, արհեստանոցները,
բանկերը ունեորների մասնավոր սեփականու-
թյուններն եյին: Զքավոր գյուղացիները չունե-
նալով հող, ձիեր, գութաններ պիտի զնային
կուլակների և կալվածատերերի մոտ ծառայու-
թյան մասնելու Բանվորները, բացի սեփական
ձեռքերից վոչինչ չունենալով, պիտի ծախեյին
իրենց աշխատանքը գործարանատերերին: Կալ-
վածատերերը, գործարանատերերն ու վաճառա-
կանները հարստանում եյին բանվորների ու գյու-
ղացիների հաշվին:

Նըսնց հարստությունների հետ աճում եր
և բանվորների ու գյուղացիների չքավորությունն
ու շահագործումը:

Խորհրդային իշխանությունը փոխել է հին
կարգերը, վերացրել է ունեորների ունեցած մաս-
նավոր սեփականությունը հողերի և խոշոր հիմնար-
կությունների վրայից և հանձնել բանվորների և
գյուղացիների ձեռքը: Ճիշտ ե, դա տեղիք տվից նոր
ավերածությունների, վորոնք քաղաքացիական
կոփակների հետևանքն են, բայց և այնպես բան-
վորներն ու գյուղացիները ներկայումս աշխա-

տելով իրենց ձեռքում գտնված դաշտերում և
գործարաններում, զիտեն, վոր իրենց աշխա-
տանքը վոչոր չի հափշտակի և ավելացած յու-
րաքանչյուր մեխն ու ֆունտ հացը բարելավում
և նախ և առաջ իրենց կյանքը: Բանվորներն ու
գյուղացիները՝ աղատվելով իրենց շահագործող
աերերից խոշոր գործարաններում և հողերի
վրա՝ կարողանում են կառուցել իրենց տնտե-
սությունը լավագույն միջոցներով և աստիճա-
նաբար իրենց ձեռքը ձգել այն՝ մակարուցների,
առևտրականների, ձեւնարկատերերի և փաշխա-
ռուների մասնավոր սեփականությունը, վորոնք
շարունակում են պահպանել իրենց գոյությունը
մինչև այսոր:

Գյուղացիությունը յուր տնտեսությունը
բարձրացնելու նպատակով համախմբվում է կոո-
պերատիվների, հանրողուտ ընկերությունների,
կոմունաների և պարարտիչ նյութեր, տոհմիկ
անասուններ, խոշոր յերկրագործական մեքենա-
ներ գնող ընկերությունների շուրջը: Խոշոր
շոգու և հատկապես ելեքտրական գութանները,
ցանիչներն ու մեծաքանակ հնձի մեքենաներն
ավելի յեն արդյունավոր, քան գյուղական նա-
հապետական արորները, ցաքանն ու գերանդի-
ները, սակայն այդ մեքենաների գնումները
մատչելի յեն միայն գյուղական մեծ ընկերու-
թյուններին: Խոշոր մեքենաների գործածությու-

նը, հասարակական ընկերությունների վարը, ցանքսը և հացի հավաքումը առաջ են ըերում գյուղական ընկերակցության խոշոր արտեխների անտեսությունների կազմակերպութիւնը:

Բանվորները գործարաններում սահմանում են ընկերական կարգապահություն, իմանալով, վոր աշխատում են իրենք իրենց համար, վերականգնում են գործարանները, հաղորդակցության ձանապարհները, ծաղկեցնում արդյունաբերությունը: Մեր պետությունը հարսանում է, բանվորներն ու գյուղացիները շուկայում հացով չպիտի զնեն գործարանային արդյունքներ՝ թույլ տալու մասնավոր վաճառականներին շահագործելու, այլ ավելի ու ավելի պիտի ընդլայնեն պետական և կոոպերատիվ ապրանքափոխանակությունը:

Այն ընկերական կարգը, վորի ժամանակ ֆաբրիկները, գործարաններն ու հողերը չեն պատկանում առանձին, մասնավոր սեփականատերերի, այլ ամբողջ աշխատավոր հասարակության, վորը ստեղծում է այդ հարստությունը աշխատանքով, յերբ մարդը մարդուն չի շահագործում, յերբ չկան տերեր և վարձու բանվորներ և ամբողջ հասարակությունը, առանց բացառության, աշխատում է հավասարության հիմունքներով հանրողութ ընկերություններում զարգացնելով ամենաբարձր արդյունաբերություն-

նը, այդպիսի կարգը կոչվում է սոցիալիստական: Այդպիսով, խորհրդային իշխանության հիմնական խնդիրը, ինչպես ասված է սահմանադրության մեջ, հանդիսանում է «քաղաքի և գյուղի բանվորության ու չքավոր գյուղացիության գիկուտուրայի հաստատումը... Բուրգուազիացի լիակատար ձնշման, մարդը մարդուց շահագործելու վոչնչացումը և սոցիալիզմի հաստատումը, վորի որոք չի լինի վնչ գասակարգի բաժանում և վոչ ել պետական իշխանություն: Թուսաստանի հանրապետությունը Թուսաստանի բոլոր աշխատավորների ազատ սոցիալիստական հասարակությունն է:

Ընդգծելով յուր գրոշի վրա այդ խոսքերը խորհրդային իշխանությունն հենց այդ պատճառով մեր հանրապետությունն անվանել ե «սոցիալիստական». Պա գեռ չի նշանակում, վոր սոցիալիզմը մեզ մոտ արգեն իրականացված է, այլ այն միայն, վոր խորհրդային հանրապետությունը կանգնած է սոցիալիզմի իրականացման ուղղի ճանապարհի վրա: Սոցիալիզմին մոտենալով Խորհրդային իշխանությունը դառնում է սոցիալիստական վոչ միայն յուր ձգտումներով և սոցիալիզմի ճանապարհն անցնելու ձեռք առած միջոցներով, այլ աշխատավորության միանգամայն և իսկական ազատ սոցիալիստական հասարակությամբ:

6. ԽՆՈՎ Ե ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՀԱՆ- ՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՄՅՈՒՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Խորհրդային իշխանությունը հասունացավ հարազատ ժողովրդի ծոցում. յուր արմատներով նա գնում է գեղի բանվորագյուղացիական մասսաները, նա արտահայտում է աշխատավոր մարդկության հաստատ կամքն ու իրավունքները: Խորհրդային իշխանությունը ձգտում է միանգամայն և վերջնականապես վոչնչացնել բուրժուազիայն, բայց վոչ այն խմատով, վոր նա ցանկանում է բնաջինջ անել, մաքրել նրան յերկրի յերեսից. ճիշտ է նա անհրաժեշտության դեպքում բուրժուազիայի դիմագրության պայքարում հարվածելով՝ նրա գլխին և թափում անգործյն պատիժներ և կոփմերում հասցնում նրան անողորմ վնասներ, բայց չնայած վոր խխտ միջոցներ են այնուամենայնիվ անխուսափելի յեն՝ բանվոր գասակարգի նապատակն և վոչնչացնել բուրժուազիային վորպես իշխող գասակարգի, վորպես պորտարույժ տարրի: Բուրժուազիան և յուր կամակատարները կամովին չեն զիջում բանվոր գասակարգին այն, վորը նրան և պատկանում, վորպես այդ հարստություններն ստեղծողի: Յեվ խորհրդային իշխանությունը, վորպեսպի հետզհետե դուրս անի բուրժուազիա-

յին այն բոլոր ամրություններից, վորը նա գեռ շարունակում է պահել հասարակական կյանքում մինչև որս, սահման յենթարկվել յուր որենքներին, յուր պետական հիմնարկություններին, վճարել հարկեր և այլն:

Բուրժուազիային միանգամայն արմատախիլ անելու և ճնշելու նպատակով՝ Խորհրդային իշխանությունը խլում է նրանից կազմակերպվելու, ուժերը հավաքելու Խորհրդային իշխանության գեմ պայքարելու և յուր կորցրած իշխանության ու արտօնությունների վերականգման համար մատածելու և ծրագիր մշակելու յուրաքանչյուր հնարավորությունը: Խորհրդային իշխանությունը բուրժուազիային և նրա կամակատարներին զըրկում և խորհրդների մեջ լինտրիվելու իրավունքից, արդելում և բուրժուազիային և նրա պնակալեզներին հավաքվելու խորհրդակցության, միությունների մեջ համախմբվելու, հրատարակելու իրենց թերթերը: Խորհրդային իշխանությունն սափառում է բուրժուազիային կրծելու յուր ստախոս լեզուն, ստիպում է լուերու նրա պսոստախուններին գագետչիներին, գիտնականներին, քահանաներին և այլ յեղբայրակիցներին:

Խորհրդային իշխանությունն ապատությունը արամագրում է միայն աշխատավորությանը, միայն այն քաղաքացիներին, վորոնք պարտապում ևն հանրողութ աշխատավորությունը:

թյան կարծիքների արտահայտման իրական ազատությունը ապահովելու նպատակով Ս.Խ.Հ.Մ. վոչնչացնում ե մամուլի կախումը կապիտալից և բանվոր դասակարգին ու չքավոր գյուղացիությանը հանձնում թերթերի, բրոշյուրների, գրքերի և տպագրական յուրաքանչյուր աշխատությունների հրատարակման տեխնիկական և նյութական միջոցները և ապահովում նրա տարածումն ամբողջ յերկրում։

Մամուլի ազատություն գոյություն ե ունենում միայն այն ժամանակը, յերբ աշխատավորությունը ունենում է յուր լրագրերը, գրքերը, վորոնց մեջ նա կարողանում է արտահայտել յուր կարծիքը, ունենում է տպարաններ և թուղթ, գրքերն ու լրագրերը հրատարակելու։ Այդ նպատակով Խորհրդային իշխանությունը աշխատավորությանը արամագրել է վոչ միայն մամուլի ձեռական ազատությունը, այլև այդ ազատությունից ոգտվելու բոլոր հարմարությունները։ «Աշխատավորության սիությունների իսկական ազատությունն ապահովելու նպատակով Ս. Խ. Հ. Մ. ընդունելով Խորհրդային Հանրապետության քաղաքացիների, ժողովների, միտինգների, շքերթների ազատ կազմակերպելու իրավունքը՝ բանվոր դասակարգին և գյուղական չքավորությանն ե արամագրում բոլոր պետքանական շենքերը ժողովրդական համարությամբ ընկնում ե աշխատավորության վնաբին։ Յեկ յեթե Խորհրդային իշխանությունը

մակերպելու համար»։ Խորհրդային իշխանությունը աշխատավորությանն ամեն կերպ աջակցում է իրենց միություններում համախմբվելու, և մենք տեսնում ենք վոր հանրապետության ամենախուլ գյուղումն անգամ աշխատավոր գյուղացիության և գյուղացի յերիտասարդության մեջ առաջ է յեկել միանալու և կոռպերատիվ ընկերություններ, կուլտ-կրթական կազմակերպություններ, համառուսական հոգանատափ աշխատավորների միություններ, մուս. Կոմ. կուսակցության և Յերիտամիության բջիջներ և այլն կազմակերպելու ձգտումը։ Խորհրդային իշխանությունը մյուս պետությունների նման պիտի ունենա և ունի յուր բանակը, միլիցիան դատարանը, բանտերը և այն, բայց միենույն ժամանակ բանվորազյուղացիական և բուրժուական իշխանությունների մեջ կա այնքան տարածություն, վորքան յերկրի և յերկնքի մեջ։ Կարմիր բանակն ազատ և ազատարար ուժ և, նա վերջնականապես ստոպակեց բուրժուազիայի ճռշցումը և պաշտպանում է աշխատավորությանը նորանոր սարկացումներից։ Խորհրդային իշխանության թշնամիներն են զգում միայն բանվորագյուղացիական իշխանության ճնշումը, իսկ բուրժուազիայի գերիշխանությունը յուր ամբողջ ծանրությամբ ընկնում ե աշխատավորության վնաբին։ Յեկ յեթե Խորհրդային իշխանությունն

աշխատավոր մեծամասնության անունից ճնշում և պորտաբուժային փոքրամասնությանը, այդ իսկ պատճառով բուրժուական պետությունները մի խումբ կապիտալիսաների կամքով և նրանց շահների համար ճնշում են ժողովրդական լայն մասսաներին—ազգաբնակչության ճնշող մեծամասնությանը։ Բուրժուական պետության առարատը—բռնությունների զենք և աշխատավորության գլխին։

Կեղեքիչների բանակը պահպանում է կապիտալիստների և կալվածատերերի արտօնությունն ու քաղցր ապրուստը։ Նա ծառայում է աշխատավորության արնալից խաղաղացման գործին, յերբ նրանք ապստամբում են իրենց վիրափորոշների և ճնշողների դեմ։

Թուսաստանի ցարական բանակն արժանացավ վոչ միայն Թուսաստանի, այլև մյուս յերկը լրիների ճնշված ժողովրդների ժանդարմի մըտրակի հերոսների մութ և ամոթալից փառքին։ Անցած դարի կիսին Ավստրո-Վենգրիայի կայսրության մեջ վենցրիայի ճնշված ժողովուրդն ապստամբվեց Ֆրանց Հովհաննի թագավորի դեմ։ Թուսական ցարը զինվորներ ուղարկեց ապատության համար ապստամբող վենցրացիների դեմ։ Թագավորի զինվորները արյունով վսղողեցին վենցրացիների ապստամբությունը և աջակցեցին կայսեր նստելու դաշի վրա։ Յեվ յեթե ցա-

րական բանակը նույնիսկ «կարգ ու կանոնի և սեփականության» միջազգային վոստիկանության գերն և խաղացել, ուրեմն ավելի քան հասկանալի յե այն վայրագությունը, վորը գործադրում եյին թագավորական իշխանությունն ու բանակը մեր յերկը աշխատավորության հետ գործ ունենալու ժամանակ։

Սկզբանդը 11 թագավորի ժամանակ, այսպիս կոչված, «զյուղացիության ազատության» նախորյակին տեղի ունեցան բազմաթիվ զյուղացիական ապստամբություններ, վորոնք ճշնշվեցին թագավորի զինվորներով։

Թագավորական բանակն ընկզմվել եր 1905 թվի հեղափոխության արյան մեջ։

Մյուս բուրժուական, կալվածատիրական պետությունների մեջ բանակն և նույնպես ժողովրդի դահճի դերը կատարում։

Կապիտալիստական բանակը կազմված լինելով միևնույն բանվորներից և զյուղացիներից, բայց սանձահարվելով և խաբվելով բուրժուագիայից, վոչ միայն ծառայում և յուր յերկը աշխատավորությանը ճնշելուն, այլ սարկացնում և ոտար ժողովրդներին և բռնազրավում ուրիշ հողերը։ 1914 թվի պատերազմի ժամանակ ֆըրանսիական, անգլիական, գերմանական, ամերիկական, ուստական և ուրիշ զարքերը գնում ելին իրենց «հայրենիքի» կապիտալիստների հա-

մար հորանոր հողեր, հարստություններ և հոր ժողովութենքներ տիրապետելու:

Իմպերիալիստական պետություններն ու նրանց բանակները կովում եյին աշխարհը կապիտալիստական գիշատիչների մեջ բաժանելու համար: Ներկայումս ել ամբողջ աշխարհը տառապում է այն իմալերիալիստների յերկաթե կրունկի տակ, զորոնք իրենց բանակի ոգնությամբ ժողովրդին հնագանդության մեջ են պահում: Ոտար պետությունների զինված զորամասերը քիչ արյուն չեն թափել մեր յերկրում՝ փորձելով խորտակել հեղափոխությունն ու Խորհրդային իշխանությունը:

Կապիտալիստների բանակը բուրժուազիայի միակ, քիչ թե շատ կարող, և սուր թուրն է բանվորների զլիսին:

Բուրժուազիան բանտարկում է բանվորներին, կոմունիստներին և ցրում նրանց ժողովները, նույնիսկ այն ժամանակ, յերբ նրանք համաձայն բուրժուազիայի զրավոր որենքների, հավաքում են պարլամենտի պատգամավորներ ընտրելու: Եթաստանում բուրժուազիան բանտարկել է դատապարտել եր սեյմի պատգամավոր կոմունիստ Դոմբավին, չնայած պատգամավորական կոչման ձեւական անձեռնմխելիությանը: Պարլամենտի ընտրությունների ժամանակ վուտիկանությունն ու խուլիգանները «Քաղաքի և գյուղի բանվորների միության» կողմից հրավիր-

ված բանվորական հավաքույթները ցրում եյին: Ամերիկայում, զորն իրեն կոչում է «ազատ» յերկիր, կոմունիստներին ազիտացիայի և բանվորներին գոծադրուների համար բանտարկում են: Գերմանիայում «Մոռե Ֆանե» («Կարմիր Դրոշ») կոմունիստական թերթը յեռանդու հետապնդվում, փակման և տուղանքի յե յենթարկում: Դրանք զեռ չարիքի սկզբնավորություններն են, յերբ բանվոր գասակարգը զլուխ է բարձրացնում և հանդես գալիս յուր ազատության համար, բուրժուազիան կազմակերպում և արտակարգ գատեր, բանտերը լցնում նրանցով և նրանց համար արյան բաղնիքներ պատրաստում: Նա կազմակերպում է խուլիգանների խմբեր, սպիտակայինների և սպաների խառնմաղանչ խմբեր, զորոնք իրենց զործն են տեսնում բանվորների և նրանց առաջնորդների հետ:

Բանվորազյուղացիական Խորհրդային իշխանությունը յուր զենքն և ուղղում բուրժուազիայի դեմ: Ճնշման միջոցով Խորհրդային իշխանությունը գնում է դեսի մարդկանց լիակատար ազատությունը, դեսի այնպիսի զարգեր, ուր բոլորովին չպիտի լինեն վոչ դատարաններ և վոչ ել բանակ: Պրոլետարիատի այդ դիկտատուրան ժամանակավոր հիմնարկություն ե: Բուրժուազիայի գիլիատուրան ձգտում է բըռնությունն ու սարկությունը ընդմիշտ հավերժացնել:

Դ. Ա. Ֆ. Խ. Հ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Պետությունը, կառավարչական ապարարև,
իշխանության և հասարակական կյանքի ամբողջ
կազմակերպությունը մի բարդ մեքենայական
(ԽԵԱՀԱՅ) կազմ է:

Պետական կառուցվածք ու հասարակական
կարգ ու կանոնը ձևակերպող հիմնական որենքը
կոչվում և սահմանադրություն:

1917 թ. հոկտեմբերին Համառուսական Խոր-
հուրդների Յերկրորդ համագումարում բանվորա-
դյուլացիական ներկայացուցիչները Խուսաստա-
նում հայտարարեցին Խորհրդային իշխանություն:

1918 թ. հունվարին լորհուրդների Յ-րդ
համագումարում ընդունվեց աշխատավորության
իրավունքների հանդիսավոր հայտարարություն-
ները (ՏԵԿԼԱՐԱՎԱ), վորի մեջ սահմանվեց պրո-
լետարիատի դիկայատուրայի խնդիրները Խուսաս-
տանում: 1918 թ. հուլիսի 10-ին բանվորներն
ու գուղացիները համառուսական խորհուրդների
5-րդ համագումարում ընդունեցին Սահմանադր-
րությունը (ԿՈՆՍԱԴԻԱԿՈՒՐԳԻԱ): Սահմանադրու-
թյունն այն հիմնական որենքն է, վորը հանդիսա-
նում է, վորպես հիմք իշխանության կողմից հրա-
տարակվող բոլոր մյուս որենքներիւ Բուրժուա-
կան, պետության հիմնական որենքը սահմանում
և բուրժուազիայի իշխանությունը բանվորների,

Դյուզացիների և բնդհանրապես չքափորության
վրա: Նա ասում է, վոր մասնավոր սեփակա-
նությունը — այսինքն, ունենորների և բուրժուա-
զիայի սեփականությունը սրբություն է, և ով
վոր ձեռնամուխ և լինում ունենորների այդ սրբ-
բազան սեփականությանը պատժվում է վոր-
պես վոճրագործ:

Ինչ է ասում մեր հիմնական որենքը. 1) Ռուսաստանը հայտարարվում է աշխատավորու-
թյան խորհուրդների հանրապետություն. 2) խոր-
հրդային իշխանությունը ձգտում է ամեն տե-
սակ ձնշումների վոչնչացման, ազատության, յեղ-
բայրության և հավասարության սահմանելու և
սոցիալիզմի իրականացմանը. 3) Խողը, խոշոր գոր-
ծարանները, բանկերը և ճանապահների հաղոր-
դակցությունն անցնում էն բանվորակյուղացի-
ական իշխանության ձեռքը. 4) աշխատանքը
պարատիր և բոլոր քաղաքացիների համար, «ով
չաշխատի, նա չի յել ուտի». 5) Ժողովների, մա-
մուլի ազատություն. ընարելու իրավունքը սրբ-
վում է միայն աշխատավորությանը. պորտա-
բուժներն (պարայի) ու չաշխատող աարբերը
գրկվում են այդ իրավունքից. 6) աշխատավո-
րության իրավունքները պաշտանելու համար կազ-
մակերպվում է Բանվորակյուղացիական բանակ: Զենքը հավաստիացվում է միայն աշխատավոր-
ությանը. Ժողովրդի թշնամիները գրկվում են

գենք ունենալու և կրելու իրավունքից. 7) սահմանել Խորհրդային իշխանության և վարչական բոլոր մարմինների կառուցումը ներքեից վերև և կենտրոնում և տեղերում, ընտրությունների իրավունքն ու կարգը խորհուրդներում և խորհուրդների համագումարներում. 8) սահմանվում ե խորհրդային հանրապետության սուբքերի, յեկամուտների և ծախսերի հիմնական դրությունը. 9) Ռ. Ա. Ֆ. Խ. Հ. նշանի և գրոշակի մասին. Այսպիսվ տեսնում ենք, վոր հիմնական որենքը պետության կյանքում ունի իսկապես մեծ նշանակություն:

Ահա թե ինչու յուրաքանչյուր գիտակից աշխատավոր քաղաքացի պիտի ծանոթ լինի և իմանալու յուր սահմանադրությունը. ահա թե ինչու Խորհրդանության բոլոր դպրոցներում մտցրված ե հիմնական որենքի ուսումնասիրությունը. Համաձայն հիմնական որենքի մեր պետության մեջ իշխող— անընդունելը, զյուղացիներն ու կարմիր բանակայիններն են: Բայց որենքը նշանակություն կարող է ունենալ միայն այն ժամանակ, յերբ նա հենվում է հուսալի ուժի վրա, որիներազ սահմանադրությունը կը լինի վորագեռ թղթի կտոր: Այդ իսկական ուժ ե հանդիսանում նախ և առաջ ինքը աշխատող ժողովուրդը և նրա ընտրյաները, յերկրի խոշորագույն հարըստությունների աիրապետություն:

«Զարքը բոլոր կազմակերպված ուժերի գործիքներից ամենաանհրաժեշտն ու ամենապահպահականն ե»:

Կարմիր բանակը մեր սահմանադրության կարեւրագույն կետերից մեկն ե: Բանակի ուժեղացումը — սահմանադրության ամենալավ ամրացումն ե:

8. ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մեր աղետության մեջ աշխատավոր ժողովուրդը ինքն և հանդիսանում յերկրի տերը, բայց պետությունը կասափարելու համար անհրաժեշտ և իշխանության բարձրագույն կամքը արտահայտողը: Աշխատավորական մասաների կամքի ոչյոցիսի բարձրագույնը, արտահայտիչը մեր հանրապետության մեջ հանդիսանում ե բանակուրների, զյուղացիների, կազմակերի և կարմիր բանակայինների պատգամավորների խորհուրդների համամիտութենական համագումարը, վորը տեղի յե ունենամ տարին մի մեզում: Պետքան կորհուրագույն զործերը վճակը համար Խորհուրդների համագումարը, վորը տեղի յե ունենամ տարին մի մեզում: Պետքան կորհուրագույն զործերը վճակը համար Խորհուրդների համագումարը, վորը տեղի յե ունենամ տարին մի մեզում:

Խորհուրդների համագումարների պատճամաւ-
վորներն ընտրվում են վոչ թե աշխատավոր ժողո-
վրդի խառնիճաղանչ մասսայից, այլ աշխատա-
վոր մասսայի կազմակերպված միություններն ի
մի համախմբող խորհուրդներից:

Համամիութենական խորհրդների համագու-
մարներին յուրաքանչյուր տարի հավաքվում են
հազարավոր պատղամավորներ: Այդ համագու-
մարում լավում է գործարանների, գաշտերի և
կարմիր զնդերի խնկական և հարազատ ձայնը:
Խորհրդների համագումարները վճռում են մեր
հանրապետության կյանքին վերաբերող կարե-
վորագույն հարցերը:

Խորհրդների 2-րդ համագումարը Ռուսաս-
տանը հայտարարեց խորհրդային հանրապետու-
թյուն, 5-րդ համագումարն ընդունեց Ռուսաս-
տանի սոցիալիստական ֆեդերատիվ խորհրդային
հանրապետության սահմանադրությունը և հանեց
կարմիր բանակի կազմակերպման վորոշումը.
6 և 7-րդ համագումարները խաղաղության
առաջարկն արին Անտանտայի պետություններին
և հրահանգեցին Համառոտական կենտրոնական
Գործադիր կոմիտեյին և ժողկոմիորհին համառ-
կերպով շարունակելու խաղաղության քաղաքա-
կանությունը:

7-րդ համագումարը վորոշեց Ռէկրայնայի
խորհրդային հանրապետության հետ ֆեդերատիվ
կապ հաստատել:

8-րդ համագումարն ի միջի այցոց մի շատ
կորեոր վորոշում ընդունեց Ռ. Ս. Ֆ. Խ. Հ.
Ելեքտրոցանցի լայնացման մասին: Խորհուրդների
9-րդ համագումարը կարեոր վորոշումներ հանեց
հանրապետության տնտեսական շինարարության
մասին: Կա ընդունեց թղթե դրամներ բաց թող-
նելու կրծատման, տուրքերի, պետական ծախ-
սերի կրծատման, հողից սպավելու ազատ ընտ-
րությունը գյուղացիներին թողնելու և պետա-
կան արդյունաբերական ձեռնարկություններն
իրենց տնտեսական գործունեյության մեջ ինք-
նուրույնություն տալու, զորքի կրծատման և
Համառոտական Արտակարգ Հանձնաժողովը պե-
տական քաղաքական վարչության վերափոխելու և
այլ բաների մասին յեղած վորոշումներ:

Համագումարից մինչ նոր համագումար հրա-
վիրելը պետության բարձրագույն որդանն և հան-
դիսանում Միության կենտրոնական Գործադիր
կոմիտեն, փորն ամեն տարի ընտրվում և համա-
միության խորհուրդների համագումարում:

Հ. Կ. Գործադիր կոմիտեն ամբողջ տարին անընդ-
հատ չի աշխատում, այլ նոտաշրջանի յե հավաքվում
տարին վոչ պակաս յերեք անգամ: Դա ար-
գում և նրա համար, վորպեսպի ավելի քան
փորձված աշխատավորներին յերկար ժամանակ
չը կարեն տեղերից և ավելի ամուր կապ պահ-
պաննեն տեղերի հետ: Համամիութենական կեն-

արոնական Գործադիր կոմիտեյի անդամները
վերադառնալով տեղերը միշտ իրազեկ են լի-
նում ազգաբնակչության բոլոր կարիքներին ու
պահանջներին։ Միության խորհուրդների համա-
գումարը և նրանից ընտրված բարձրագույն
կառավարչական բարձրագույն որգանը վճռում
են պետական կյանքին և քաղաքականությանը
վերաբերող հիմնական կարեսը ազգույն խորիքները։
Միության կենտրոնական Գործադիր կոմիտեն
հաստատում և հրատարակում ե ժողովրդական կո-
միսարների Խորհրդի որենքներն ու կարգադրու-
թյունները, նաև զեկավարում ե ժողովրդական
կոմիսարների խորհրդի գործունեյությունը և հե-
տեւմ կյանքում այդ որենքների ուղիղ և ան-
շեղ կիրառմանը։

Միության Խորհրդադիր չամազումարն ու
կենտրոնական Գործադիր կոմիտեն զեկավարում
են Խորհրդային իշխանության ներքին ամբողջ
գործունեյությունը և բանակցությունների ու
հարաբերությունների մեջ մտնում ուրիշ պետու-
թյունների հետ, կարգավորում են Խորհրդային
իշխանության սահմաններն ու Միության մեջ
